



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԵՐԻԿՈՒՄ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՊՐԱՎ 1.



ՆԻՒԹ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

ԱՐԴՅՈՒՆ

Սկիզբ ճանապարհորդութեան. (Թիֆլիսից—Բաթում)

Պոնտոսի Կովկասեան ափելը — Բաթում: Բաթումից — Սուխում: Սուխում:
Սուխումից — Նոր-Աֆօն: Նոր-Աֆօնից — Նովորոսիյսկ: (Նովորոսիյսկից — Եկա-
տերինոդար: Եկատերինոդար: Վերադարձ Նովորոսիյսկ): Դէպի Տաւրիկեան թերակղզին:
Դրիմ: — Կերչ: Կերչից Թէոդոսիա: Թէոդոսիա: Դէպի Սիմֆերոպոլ: Սիմֆերոպոլ:
Մախչիսարայ: Եալթա: Սևաստոպոլ: (Յիշողական տպաւորութիւններ): Սիմֆերոպոլից
Ռոստով և Նոր-Նախիջևան: Մի քանի օր Դօնի ափերում:

Յարելի մայրաքաղաքները: — Ռոստովից Մոսկուա: Մի ամիս Մոսկուայում:
Մոսկուայից — Պետերբուրգ: Մի ամիս Նեվայի ափերում: Յարսկոյե Սելո:

Փինլեանդիա: — Պետերբուրգից — Վիբորգ: Վիբորգից — Խմատրայի Ջրվէժը: Դէպի
Գինական մայրաքաղաքը: Հելսինքֆորս: Հելսինքֆորսից — Արօտ:

(Սկիզբ Բ. Հատուրի ԴէՊԻ. Սկանդալի)

D
13.369

ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«ԳԵՂԱՐՈՒԹՅԱ»

ՊԱՏԿԵՐԱԳԱՐԴ ՀԱՆԴԻՍԻ

ԱՀԲԱՐԵՐՀ - ԱՇԽԱՐՀ

Կ Ա Մ

20,000 ՎԵՐԱ ԵՒՐՈՎԱՐԴԻ

ՈՒՂԵԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՆԵԱՆԻ

(Փարտկաներով եւ պատկերներով)

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Փարտկաներով եւ պատկերներով)

Հ Ի Ւ Գ Հ Ա Տ Ո Ր

Հ Ա Տ Ո Ր Պ Ա Պ Զ Ի Ն

Թ Ի Ժ Լ Ի Ւ

Տպարան «ՀԵՐՄԵՍ» Գրաֆիսկայա փող.

1914

ИЗДАНИЕ АРМЯНСКАГО ХУДОЖЕСТВЕННОГО ЖУРНАЛА „Г Е Х А Р В Е С ТЪ“.

ПО БЪЛУ СВЪТУ

и ли

20,000 ВЕРСТЪ ПО ЕВРОПЪ

экспедиция

ГАРЕГИНА ДЖИВАНИ ЛЕВОНЬЯНЪ

изученія и впечатлѣнія

(Со многими рисунками въ текстѣ)

Пять томовъ

Томъ первый

тифлисъ

ГАРЕГИНА ДЖИВАНИ ЛЕВОНЬЯНЪ

(издательство издательства)

1880 г. 1881

ԱՐԵՆԻ ԽՐԱՆՈՒՆՔ ՎԵՐԱՊԱՀՈՒԱԾՈՒԱԾ Ե ՀԵՂԻՆԱԿԻՒՆ

Տ Ե Լ Ա Շ Ա

Խ Ր Ա Ն Ա Ր Ա Վ Ո Ր Դ Ո Ւ Թ Ե Ա Ն

ԹՐԱԳԻՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Պոլսոսի Կովկասիան ափերը.—Բաթում, Սուխում, Նոր-Աֆօն, Նովոռոսիյսկ:
Ղրիմ.—Կերչ*, Թէոդոսիա, Միմֆերոպոլ, Բախչիսարայ*, Եալթա, Սևաստոպոլ*:
Մըջին Ռուսաստան.—Եկատերինովար, Ռոստով, Նոր-Նախիջևան:
Յարերի մայրաքաղաքները.—Մոսկով, Պետերբուրգ (և Յարսկոյ Սելո*):
Փինլենդիա.—Վիբորգ, Իմաստա, Հելսինքֆորս, Արօ:

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Շվեդիա.—Ստոքհոլմ, Ուպսալա, Մալմօ, Տիլբորգ:
Փրուսիա.—Բեռլին, Համարվէր, Օմնաբրիւկ, Հալլե, Բրեմենու:
Սաքսոնիա.—Դրեզդէն, Լայպցիգ*:
Աստրիա.—Լիմբերգ*, Կրակով, Վիճնա, Պրագա:

ՀԱՏՈՐ ԵՐՐՅՈՐԴ

Իտալիա.—Ուգինո, Վենետիկ, Վերոնա, Բոլոնիա, Ֆլորենցիա, Հոռոմ, Նէապոլ, Պոմպէյ
և Վեզուվ, Գենուա, Միլան:
Շվեյցարիա.—Լոգան, Ժընև, Մոնտերէ, Շիլին:

ՀԱՏՈՐ ԶՈՐՅՈՐԴ

Փրանսիա.—Լիսոն, Դիժոն, Պարիզ, Կալէ:
Անգղիա.—Դուվը, Լոնդոն:

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Բելգիա.—Օստանդ, Բրիւսուէ, Անտվերպէն:
Հոլլանդիա.—Բոստերդամ, Հաագա, Ամստերդամ, Զաանդամ:

Յատկուած. (Վելագարձ).—Ալէքսանդրովո, Վարշավա, Բրեստ-Լիտովսկ, Մինսկ,
Սմոլենսկ, (Նորից Մոսկովա), Տուլա, Օրեոլ, Կուրսկ, Խարկով, Նովօչերկասկ, (Նորից
Ռոստով-Նախիջևան) Բագու, Գանձակ, * Թիֆլիս:

Ճամբորդական եւ օտար կեանքում
երկասիրած այս աշխատութիւնը

ԻՒՐ ԱՆԿԵԴԾ, ԱՆԿԱՇԱՌ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ ԲԱՐԵԿԱՄԻՆ

ՍԻՐԵԼԻ ԱԻԵՏԻՔ ԻՍԱԿԱՎԵԱՆԻՆ

Բանաստեղծի մէջ բարձր տաղանդն ու ազ
մարդն անչափ գնահատող ու լարաս

ՀԵՂԻՆԱԿ

ԱՐԱԶԱԲԱՆ

ովկասահայ մտաւոր-կուլտուրական միջավայրում իմ համեստ ուժերն ամբողջովին նուիրած լինելով մայրենի գեղարուեստին, գրականութեան և դպրոցին, ես անհրաժեշտորէն պարտք էի զգում՝ այդ ասպարէզներում աւելի արդիւնաւոր և օգտակար լինելու համար մի առժամանակ անցնել արտասահման, մօտիկից ծանօթանալու արևմտեան գրական, գեղարուեստական և դպրոցական անցեալին և ներկային, ինչպէս և նորագոյն հոսանքներին։ Գեղարուեստական-հնասիրական էքսպելիցա, ուսումնամիրական ուղևորութիւնն դէպի լուսաւոր հորիզոններ, դէպի Արևմուտք-որոշել էի, և այդ հարցի լուծումը վերջին ամիսներում դարձել էր ինձ համար լուրջ մտածութեան առարկայ։

Առաջին անգամը չէր որ ես ոտք պիտի դնէի արտասահման՝ և ոչ էլ նախկին, վառեցիտասարդական տարիների յափշտակութիւնն ու նախապաշտունքն ունէի Եւրոպայի ամէն ինչը գերագոյն և գերազանց տեսնելու. այլ այս անգամ աւելի հասուն, աւելի սառն՝ և քննադատ գիտակցութեամբ պէտք է մօտենայի ամէն Երևոյթի՝ ու նոյնիսկ համեմատութեան առնէի զանազան ազգերի ու ժողովուրդների հանրային-կուլտուրական ու բարոյական կեանքի մակարդակը՝ մեր Երկրի հանդէպ ընդհանրապէս, և մեր ազգի, մեր ցեղի՝ մասնաւորապէս:

Յաջողութեամբ կատարելով իմ մեծ ճանապարհորդութիւնը, ևս ուսումնասիրութիւնների, տեղեկութիւնների ու տպաւորութիւնների բաւական հարուստ պաշարով վերադարձայ հայրենի միջավայրը, սորից անձնատուր լինելու իմ սիրելի զբաղմունքներին։ Այդ զբաղմունքների մէջ, ներկայումս, ես առաջնութիւն եմ տալիս իմ ուղևորութեան բովանդակ պատմութիւնը գրելուն, քանի գեռ թարմ են իմ ճամբորդական յուշերն ու տպաւորութիւնները։ Վերև յիշուած այն ընդհանուր երևոյթները, սակայն, եթէ ամենը նկարագրուելու լինէին իմ երկար ճանապարհորդական նկարագրի մէջ իրենց բազմազան և բազմագունի գծերով, ոչ միայն հինգ, այլև հինգ տանգամ աւելի այսպիսի հատորներ գրելու պէտքը պիտի ունենայի։ Մի մարդու ուժերից

բարձր եմ նկատում, նոյնիսկ, որ կեանքի ամէն երևոյթը, հասարակական հանրային խոշոր անցուղարձը, քաղաքական ու միջազգային կացութիւնը կարողանայ իր իսկութեամբ ընդգրկել և թէկուղ սեղմ ձեռվ զրի առնել: Իմ նպատակը և ծրագիրը շատ աւելի համեստ է. մի ծրագիր, որի մէջ ես ինձ համարում եմ համեմատաբար աւելի ձեռնահաս կամ աւելի ծանօթ՝ զեղարունոտ, զպաղոց՝ (նախական և պրօֆեսսիօնալ կրթութիւն), զրականութիւն, պատմա-նասիրական նետախուզումներ և տպագրական-հրատարակչական գործ: Ահա իմ ճանապարհորդութեան ընթացքում այս կողմի և երևոյթների վրայ եմ աւելի կանգ առել և այս շրջաններում արած իմ պրավուժներն եմ զլատուր նիւթ գարձրել իմ ներկայ աշխատութեան: Եւ եթէ ես իմ երկասիրութիւնը անուանել եմ ուսումնասիրութիւններ և տպատրութիւններ, «ուսումնասիրութիւններ» պիտի որոնել միայն իմ այդ զլատուր ծրագրի մէջ:

Իչտ նպատակ ունենալով իմ ուսումնասիրելի առարկաները, ես, երկրորդական նկատումով՝ իմ «տպաւորութիւններ» էլ հաղորդում եմ ընթերցողներին առւել երկրի բնակչութեան, լեզուի, բարք ու վարքի, գիտական վերջին նորութիւնների, առեարա-արդիւնաբերական կեանքի և այլ խոշոր երևոյթների մասին, առանց որոնց իմ աշխատութիւնը պիտի լինէր միակողմանի, ուզում էք անուանեցէք «մասնագիտական» և լայն շրջանների համար նոյնիսկ տաղակալի: Մինչկ իսկ անկարելի է գառնում մի որևէ քաղաքի ներկայ կեանքի մասին խօսել, առանց նրա պատմական, կառավարչական ու հասարակական զրութեան, մասին գէթ հարևանցի նկարագրութիւն անելու: Պարզ է, կարծում եմ, որ այս վայրերում, ուր գեռաւ չկայ գեղարուեստական կամ գրական բարգաւաճ կեանք, իմ գրչին նիւթ պիտի դառնային միւս երևոյթները:

Որոշելով այստեղ իմ բուն և երկրորդական ծրագիրը, ուրեմն և աշխատութեանս նիւթը, մնում է ինձ յիշել և մի երրորդ տեսակի նիւթ, որը սակայն երրորդական չէ, այլ նշանաւոր. այդ այն է, որ ես իմ գործի մէջ, անկախ միւս նիւթերի կարգից և ծաւալից, մեծ տեղ եմ տուել հայկական կեանքին: Ամէն անդամ, ամէն տեղ յիշատակել եմ թէ տուել երկրի, կամ քաղաքի մէջ ի՞նչ տեղ են բռնում հայերը, ի՞նչ պատմութիւն ունի այդտեղի հայ գաղթականութիւնը, ի՞նչ է նրանց ներկան և ի՞նչ ապագայ է սպասում նրանց: Եթէ, օրինակ, Ամստերդամում այսօր մի հայ էլ է չի մնացել, բայց ժամանակին այնտեղ հայերը որոշ ազգային-կուլտուրական դեր են խաղացել, այդպիսի երևոյթների մասին ես նոյնպէս զբաղուել եմ իմ գործի մէջ:

Խմ ուղեգիծը (մարզուտ) սկզբում կազմել էի շատ աւելի ընդարձակ, քան յետոյ հասարաւոր եղաւ ինձ ճանապարհորդի, լուսոն հասնելուց յետոյ ես մտադիր էի գնալ Հիւսիսային Ամերիկա և ապա վերադառնալ Պոբառդակայի, Սպանիայի, Ալժիրի, Եգիպտոսի, Յունաստանի և Թիւրքիայի վրայով բաթում, բայց ի՞նչ ի՞նչ հանգամանքներ պատճառ դարձան առժամանակ յետաձգել իմ Ամերիկա մեկնելը՝ և ես Անգլիայի հայրենիք վերադարձայ ուրիշ ճանապարհուով: Գրքիս սկզբում եղած ծրագրի մէջ յիշատակուած են այն

քաղաքները ուր ես կանգ եմ առել և մնացել աւելի կամ պակաս չափով: Աստղանիշ կրող քաղաքներում ես եղել եմ ուրիշ անդամներ և նախկին ուսումնասիրութիւններս ու տպաւորութիւններս այժմ միացնում եմ ներկայ աշխատութեան: Ծրագրում չեմ յիշատակել այն քաղաքները, որտեղից անցել եմ միայն կայարանից կամ ծովափից՝ կարծ ժամանակ միայն կանգ առնելով երկաթուղու կայարանում կամ նաւահանգստում:

Խմ ճանապարհորդութիւնը տեսց աւելի քան 16 ամիս: Թիֆլիսից դուրս եկայ 1912 թուականի սեպտեմբերի 20-ին, նորից Թիֆլիս վերադարձայ 1913 թուի դեկտեմբերի 23-ին: Աշխատութեանս մէջ նուազ կարեսրութիւն տալով ամսաթուերին, չեմ յիշատակում ամէն տեղ՝ օրին:

Խմ ուսումնասիրութիւններից և տպաւորութիւններից բացի որոնք իմ ուղերական տեսրակներում զրուած կամ զրի են առնուած իւր ժամանակին: Կողմանց պատուելով զրում, պատրաստում եմ ներկայ աշխատութիւնը, երբեմն պէտք է եղել՝ թէ իմ մի քանի շտապ զրի առած նիւթերը վերստուգութեան ենթարկելու և թէ որոշ լրացումներ անելու համար՝ դիմել օտար աղքիւղների: Այդպիսի օժանդակ աղքիւրներ են հանդիսացել իմ ճանապարհութիւնների անցած ուրիշ, օտար ճանապարհորդների լոյս ընծայած գործերը, ինչպէս և հայ և օտար պարբերականներում երեցած յօդուածներն ու թղթակցութիւնները: Տեղեկատու հրատարակութիւններ, ճամբորդական ուղեցոյցներ, մուզինների և այլ պատկերասրանների ցուցակներ և նման մանր գործերը նոյնպէս աչքի առաջ եմ ունեցել, երբ պէտք է զգացուել որևէ ստուգութեան կամ լրացուցիչ տեղեկութիւնների: Օտար տեղերից վերցրած նիւթերի տակ միշտ յիշատակել եմ աղքիւրները իրենց տեղերում:

Կնձնական միջոցներով ու ջանքերով կատարելով իմ ճանապարհորդութիւնը, ներկայումս նոյնպէս անձնական միջոցներով, առանց մի կողմնակի օգնութեան և առանց սպասելու տաղտուկ բաժանորդագրութեան հետևանքին, իմ այս ընդարձակ աշխատութիւնն յանձնում եւ տպարանին, պրակ սլրակ լոյս ընծայելու որոշումով: Խոր մէջ խիստ սակաւ են ճանապարհորդական ինքնուրոյն զրուածքները՝ և ընթերցող հասարակութիւնը սիրով հետաքրքրուում է նման գործերով, երբ մասնաւոր պատմողական պարզ ոճով ու լեզուով է զրուած լինում և նկարներով ու պատկերներով լուսաբանուած այնտեղ տարբեր ազգերի ու ժողովուրդների կեանքի և քաղաքակրթութեան տեսառաններն ու բնորոշ գծերը: Եւ եթէ իմ այս աշխատութիւնը մեր հասարակութեան լայն շրջանների ուշացրութեանն արժանացաւ, ու նիւթ դարձաւ նրա սիրելի ընթերցանութեան, ես արդէն իմ նպատակին հասած կլինեմ: Այդ բարոյական խրախուսանքի հետ միասին երբ ես տեսնեմ անտեսական աջակցութիւն, գոնէ այն չափով, որ կարողանամ այս բազմածախս հրատարակութեան ծախսերը ծածկել, այդ արդէն ինձ լիակատար քաջալերանք կը լինի նոյնիսկ իմ ապագայ աշխատանքների համար:

Իմ խօսքի վերջում քաղցր պարտականութիւն եմ զգում հրապարակային շնորհակալութիւն յայտնելու այն յարգելի անձերին և հաստատութիւններին, որոնք զանազան քաղաքներում ու վայրերում չը խնայեցին հասցնելու ինձ իշրենց բարոյական օգնութիւնը։ Իմ գրական համեստ աշխատաւորի անունը միախառնուելով իմ հանգուցեալ հօր՝ աշուղ Զիւանիի հանրածանօթ և ժողովրդական անունին, գոհութեամբ եմ արձանագրում, որ թէ մեր երկրում, թէ Ռուսաստանի սահմաններից շատ աւելի հեռու վայրերում մեր ազգակիցների կողմից ինձ արժանացըրին սիրավեր ուշադրութեան, յարդանքների և անկեղծ փայփայանքի։

Սրտագին շնորհակալութիւններ։

ԳԱՐԵԳԻՆ ԼԵԽՈՆԵԱ

1914 թիւ, 25 մարտի
Թիֆլիս.



ԹԻՖԼԻՍ

ԵՐԿԱԾՈՎՆՈՒ ԿԱյաբան

ՍԿԻՖ ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ

Թիֆլիսից-Բաթում
(327 վերստ)

Նոգեկառքը մեկնեց. ես, կարծես դեռևս չուզենալով այդպէս շուտ մռանալ Թիֆլիսը, կանգնել էի վագոնի լուսամուտի առաջ ու դիտում էի մթութեան մէջ հազարաւոր ճրագներով փայլվող քաղաքը. դիտում էի անխօս, համրօբէն, բանաստեղծի ասածի պէս ակնապիշ, անձայն, խորհուրդը ճակատիս. Սուրբ Դաւթի սարը, Թիֆլիսի այդ մշտնջենաւոր վիթխարի պահապանը, որ նմանում է եափունջին ուսերին առած ու չոգած ծերունու, իւր մեծղի, մռայլ ու զորշ զանգուածով կարծես դեռևս դէմս կանգնած, ճնշում էր առանց այդ էլ իմ մռայլ ու ճնշուած հոգին: Ձիւնիկիւրօրի աստիճանաբար իջնող տասը լապտերներն էլ կասես փայլուն կոճակները լինէին այդ ծերունու. կոճակներ, ուր դեռ քիչ առաջ այնպէս պսպղում էին Մթածմինդայի թաւ կուրծքին: Անցանկալի էր ինձ համար այդ սարի ծանրանիստ ներկայութիւնը հեռուն ձգաող հայեացքիս առաջ. նա ինձ շատ էր ձանօթ. ես գնում էի տեսնելու հեռուն, անծանօթը. տեսնելու նոր երկիրներ ու աշխարհներ:

Ի՞նչ մտքեր ասես, ի՞նչ տրամադրութիւններ, որ չեն պաշարում մարդու այդ ժամանակ. — «Գնում եմ... բայց վերադառնալու եմ արդեօք,... ովզ գիտէ...»: «Ճամբորդի գնալն իւր ձեռքումն է, գալն՝ Աստղու» — գլխիս մէջ մեխում էր մեր այս հինաւորց առածը: Յիշում էի նոյնալիս սուսական առածը, որ ասում է՝ «Բոլյոնու և дорожյոնու հետեւ օրու»: Յիրաւի, հիւանդի և ճանապարհորդի համար օրէնք չկայ գրուած. մէկը կարող է հիւանդանալ և չառողջանալ, միւսը գնալ և չվերադառնալ: Բնական էր վրդովմունքս. տասնեակ հազարաւոր վերստեր ունէի անցնելու. ծովեր ու ցամաքներ, սարեր ու ձորեր, գաշտեր ու անտաներ, լճեր ու գետեր, քաղաքներ ու գիւղեր՝ բաղմաթիւ, բազմատեսակ. բայց ես ինքս ինձ քաջալերեցի և յանձնեցի բախտին:

Զը գիտեմ որքան ժամանակ էի կանգնել լուսամուտի առաջ. Թիֆլիսը վաղուց անհետացել էր, ու ես ապշօրէն ու անթարթ հայեացքով հետևում էի դիմացս ծառերի և հեռագրասիւնների արագութեամբ միմեանց յաջորդող սիլուէմաներին, երբ իմ տարտամ ու կիսարթուն գրութեան մէջ լսեցի կօնդուկտորի ձայնը —

«Վասի билеты... Գոսпода, билеты приготовьте...»¹⁾

Եկան, եկան միմեանց յետեւ երկաթուղու պաշտօնեանները. մէկ, երկու, երեք մարդ, լապտելները ձեռքերին, կարծես մեծ նազովեցուն էին որոշ նում Գեթսեմանի մթութեան մէջ:

Դրսի աշխարհից և իմ մտորումներից աղատուեցի և տոմսակս նրանց ներկայացնելիս ուշք դարձի վագնի ներսերը: Ճանապարհորդները, ինչպէս սովորական է աեմնել այդ պահուն, արդէն պատրաստում էին քնելու. ոմանք խոմփացնում էին արդէն. աեղ աեղ էլ զեռկս խմբակներ կազմած խօսում էին օրուայ նորութիւններից և իրենց ընթացիկ գործերից:

Ես գեռես չեի ուզում քնել. միայն սանտիմենտալ գրութիւնից ինքս ինձ աշխատում էի թափահարել ու ձեռք առնել իմ ճամբորդական աեւսրաւու կը ընդհանուուր և խոշոր գծերով զրի առնելու այն տպաւորութիւնները, ու բորք նիւթ պիտի դառնային ապազայում իմ աշխատութեան համար:


Լուսինը գուրս էր եկել արդէն ու երկիրդմի պատուհաններից սիրուն տեսարաններ էին պատկերանում իմ առաջ:

Գեղեցիկ է վրաստանը, գեղեցիկ իւր ընութիւնով ու բունականութեամբ, իւր դաշտերով ու բլուրներով, իւր հովիաններով ու բարձրակատար լեռներով: Գեղեցիկ է պատմական իշերիան նշանաւոր կոթողներով ու յիշաւակարաններով: Սիրուն եմ քեզ, գեղեցկուհիդ Սաքարթվելո, սիրուն եմ քո անցեալը, երբ մանաւանդ դու իմ մօրաքոյն ես, իմ աննման, իմ պաշտելի զառամեալ ծնողի նոյնալիս խեղճ ու որբեայրի քոյրը: Զայրանում եմ ինքս ինձ վերայ, որ բնութիւնից զրկուած իմ բանաստեղծական համարից, ու չեմ կարող գովել ու գովերգել այստեղ այդ երկու բախտակից ու չվառ հարազատներին թեկուզ իրենց մերկացած գեղեցկութեամբ: Կը հրդէի որ:

Երկար սպասեցի փրկութեան օրիդ և միայն տեսայ աւեր ըոնութիւն... (Յով.)


1) Զեր տամսակներ... պարոններ, պատրաստեցէք տամսակները.

— ապայի յանիս զայլ ուսիսամարի և ու Մայր Աղեղեցին



Անա, ահա Մցիւէթը, պատմական վրաստանի անուանի վայրերից նըշանաւորը կամ նշանաւորագոյնը: Ահա և վրաց կուլտուրայի ճարտարարուեատ կոթողներից մէկը, Մցիւէթի տաճարը. հոգ չէ թէ շողեկառքը մի քանի բոպէ է միայն կանգ անում այստեղ ու ես, գեղեցկութեան խոնարհ սպասաւորս ու ծերմ երկրպագուս չեմ կարող կրկին տեսութեան գնալ այդ հրաշակերտին:

Չեմ կարող, ափսոն, դարձեալ մի անգամ փառաւորուել տաճարի գեղեցկապանծ կառուցւածքով: Բայց ես ճանաշում եմ Մցիւէթը, ուրիշ անգամներ մեծ հաճոյքով դիմում եմ նրա հոյաշէն:



Մցիւէթ լնդնանուր տեսք տեսքը ու ամասուայ տապակն ամենայն երկիրածութեամբ վայելի եմ նրա սրբազն կամարների հովանին: Ես կարող եմ իմ մտաւոր պատկերների մէջ տեսնել քեզ, ով գեղեցկուհի, նոյնիսկ քո վաղեմի փառքիդ մէջ, հապատ, պերձաշուք: Թող միւս ճանապարհորդները առօրեայ խնդիրների մասին խօսնել ու վիճաբանեն, թող նրանցից մէկը իւր ապրանքը գովաբանէ, միւսը իրենց գաւառապեալ գէմ արտնջայ, ես խուլ կը ձևանամ այդ «աշխարհի ունայն շշուկին»: Ու աչքերս յառած դէպի վերև, ուր սովորական հայեացքով նայելիս ճամբորդական պայուսակներ ու զամբիւղներ են երկում, ես կը տեսնեմ վրաստանի անցեալից սիրուն, հիսաքանչ պատկերներ, մէկը միւսից սիրելի, մէկը միւսից հետաքրքրական:

Հեթանոս Մցիւէթը.

Վաղ առաւօտ է, արշալոյսը նոր-նոր սկսում է իւր ծիրանավառ լրյում սփռել Վրաստանի՝ բարձունքներուն: Գեղեցիկ բլուրներն ու տափաստաններն հետզհետէ ողջունում են բնութեան հրաբի թագաւորի արթնացումը: Ահա Մցիւէթը զարթնում է քնից ու հայրենական հաւատին անձնուեր ու ջերմեռանդ քաղաքացիք իւրենց տների տափարակ կատուրների վրայ բարձրացած ու երեները զարձրած քաղաքից մի քանի փարսախ հեռաւրութեան վրայ՝ գետի միւս կողմում կանգնած Արամազդի ոսկեռյլ արձանին, երկպագում են նրան: Այնտեղ քըրմապետը մի խումբ սպիտակազգեստ քրմերի առաջնորդութեամբ առաջ է գալիս կանգնում արձանի դիմաց, բազուկները պարզում վերև, չերմազին աղօթքներ է մրմնչում ու բորբոքում ատրուշանի մշտավառ կրակը: Քաղաքից խումբ ուխտաւորներ՝ տղամարդիկ, կանայք, երեխաներ գետ հաւախօսից գէպի մեհեան են ուղեկորւում ու բերում իրենց զոհերը մատուցանում աստուածների աստուածուն: Տիսարանը սքանչելի է, պատկերը սրտագրաւ:



Մցիւէթ

Դեղջուկ վրացուհիք

Է Արամազդի ամպրոպային արձանը, հալածում է քրմերին ու հեթանոս եկեղեցու աւերակներու վրայ կանգնեցնում է խաչը քրիստոնէական: Ժողովուրդը չի ընդիմանում, քրմերն են ուժ իրարանցումի մէջ են. բայց ս. Նունէն երկնառաք պատգամախօս է և իւր թովիչ հայեացքով զսպում է խոռվարաներին՝ ու իշխանաւորների աջակցութեամբ արտաքսելով քրմական երամներին, հիմք է զնում Մցիւէթի տաճարին, *)

*) Այս երկու պատկերի նիւթը վերցել եմ Մովսես Խորենացուց (թ. 86.)

Շնորհին նունէի թնդեղը արս հաւատարիմս, յղեաց առ սուրբն Գրիգոր, եթէ զինչ նինչ երանելոյն նունէի այնունեան, քանզի յօժարութեամբ ընկաւան վիրը քարոզութիւն աւետարամինչ ցոր տալոյ Տեառն հովիւ յառաջնորդութիւն նոյա: Եւ իսկոյն կործանեաց զամպրոպային պատկերն Արամազդայ, որ կայրի մեկուսի ի քաղաքին (Մցիւէթ) զետոյն հզօրի ընդ մէջ անցանելով, զոր սովոր էին երկուստիւ այգուն այգուն ի տանեաց իւրաքանչիւր, զի հանդէպ նոյա երեք, իսկ ոք զոհել կամէք, անցեալ ընդ գետն, առաջի մեհենից զոհեք:

1) Մցիւէթի տաճարը վրացուց մէջ յայտնի է Սպիտի Ցիստել կանդանարար սիւնա անուսով, սատ աւանդութեան, թագուած է եղել Քրիստոսի պատմուննը: Հետեւալ Վ-րդ զարում շինուամ է քակառուցում այս տաճարը, որ երկրաշարժից կործանում է 1318 թուին: Վրաց Գէորգ Վլ-րդ թագաւորը նորից է քակառուցում այս տաճարը, որը հիմաստակ է անում Լինկթեմուրը: XV-րդ զարում Ալեքսանդր թագաւորը

Դարձեալ մի պատկեր:

XIV-րդ դարը իւր երկրորդ կէսն է թևակոխում: Միջնադարեան արհելքի աշխարհաւեր մեծ բանակալը՝ կենկիթեմուր իւր ճանապարհին ամէն ինչ հրի, սրի և աւերածութեան մատնելով եկել հասել է Վրաստան: Դրախտանման երկիրը՝ դժոխքի է փոխարինուամ: գինեսէր ու երգասէր ժողովրդի ուրախական աղաղակներին ու բացականչութիւններին յաջորդում են լաց, վայնասուն և աղեկտուր հառաջանքներ: Արքունի մեծամեծ շէնքերի հետ Մցիւէթի տաճարն էլ հիմնայատակ է անում աշխարահոչակ վանդալը և իւր յետեռում թողնելով աւերակների ըլուրներ, զնում անցնում է առաջնոյն եռանդով շարունակերւ իւր գիւահաճոյ գործը:

Եւ այսպէս երեակայութեանս մէջ ուղտերի կարաւանի նման շարանշարան գալիս անցնում էին պատմական Վրաստանի կեանքից հետաքրքրական պատկերներ, երբեմն ուրախ, երբեմն տխուր և սրտմաշուք գոյնով ու երանգներով:

Աչքերս խվեռում էին սակայն. կէս գիշերն անցել էր, բնական օրէնքը իւրն էր պահանջում: Բարի գիշեր...



շինում է այն հոյակապ մայր եկեղեցին, որը և կանգուն է մինչեւ այսօր: Ճարտարապետական արժէքանը արտաքին ունենալուց բացի, այս տաճարը իւր ներքին կողմով էլ մեծ հետաքրքրութիւն ունի մինչեւ այսօր անեղծ պահպանուած իւր Փրեսկօներով (որմանկար), որոնցից նշանաւորն է Տիրամօր պատկերը և վրաց թագաւորների նկարներ աղդակենքների մէջ: Այս վանքի տօնական հանդէսը կատարում է ամէն առը հոկտ. 1-ին, զրաւելով Թիվլիսի և շրջակաների վրացիներից, հայերից և կովկասիան այլ քրիստոնեայ ժողովրդներից ուխտաւորների մեծ բազմութիւն: (Կավկազի Կալենդար 1914 թ. և «La Casucase illustrée» 1901-2 № 2)

ՊՈՆՏՈՍԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՓԵՐԸ

ուաւօտեան 9 ժամին մէր զնացքը կանգ առաւ Բաթումում:
Ես սիրել եմ այս քաղաքը իւր գեղեցիկ դիրքի համար, իւր հարուստքու-
սականութեան, իւր ծով ու ցամաքի ներդաշնակ հարեանութեան, իւր հա-
զուագիւտ ծառաստան-զբօսարանի համար: Ես ատել եմ այս քաղաքը երբ
նա յամառօրէն անձրել է օրեր ու շաբաթներ, երբ իւր խոնաւութեան
հետ տարծել է տիրութիւն և թախիծ: Բայց չնորհակալութիւն Բաթումին,
այս անգամ նա իւր սիրուելու դերի մէջ դիմաւորեց ինձ, ուրախ և առկոտ:



Rumpel

Ենդիանուբ տեսք


Կայարանի բեռնակիրները իրերս փախցրին արագութեամբ՝ ու ես
շտապով հետևում էի նրանց քայլերին, մինչև կառքին հասնելի:
Եղանակը իսկ որ հրաշալի էր, զով, պայծառ ու գեղեցիկ. Բաթումի
փոփոխական օրերի շարքում սա մի հազուադէպ օրերից մէկն էր:
Հիւրանոցում անպաճոյճ, անսեթեէթ արդուզաբոս կարգի բերելուց յե
տոյ, զուրս եկայ:

Դէպի ծովափ...

Յամաքային տարածութեան բնակիչներս, երբ ընկնում ենք մի ծովեղբեայ քաղաք, մանաւանդ երկար ընդմիջումնց յետոյ, առաջին խոկ պահուն մեր քայլերն ուղղում են զէպի ծովը. (թող ների ինձ Բագուն, որ իւր ծովի նաւթոտ ափերը չունին այդ գրաւիչ ընդունակութիւնը): Մոգիչ, հմայիչ ոյժ ունի ծովի տարերային անհանգստութիւնը, ալիքների խորհրդաւոր ծրագանքն ու միալար շըրմփիւնը:

Դէպի ծովափ...

Կեցցէ Բաթումը. լաւ քաղաք է. մաքուր, հովաշունչ. ճոխ, արևադարձային բուսականութիւն ունի, փոշին և ցեխը վազուց վտարել է իւր սահմաններից. Բայց նա թող շատ չը հպարտանայ, պիտի ասեմ և նրա պակասութիւնները: Ինչքան գեղեցիկ է նա արևոտ, պայծառ օրերին, այնքան էլ մոռայլ ու թախծոտ է անձրեային, ամպոտ օրերին. և այս վերջին տեսակի օրերն, ափսոս, շատ շատ են նրա օրացոյցի մէջ: Բաթումը նման է այն քմահաճ նազելի գեղեցկունուն, որ իւր լաւ տրամադրութեան ժամանակ աջ ու ձախ առատ ժպիտներ է արձակում. իսկ երբ նրան բարկացնում են, ըստէապէս խոռվում է, որոտում, լաց լինում ու կայլակ կայլակ արտասուբներ անձրեում:



Բարում

卷之三

Մտայ բուլվարը, Բաթումի հոյակապ ծառաստանը, մի ընդարձակ զբօսարան, որը կարող է առաջինը համարուել ամբողջ Կովկասում։ Բազմաթիւ ձեմողներ կային, բայց կային և բազմաթիւ մոծակներ. սա էլ Բաթումի պահասութիւններից մի ուրիշ. տեսնքի, ջերմի բուն լինելուց դեռ չի դադարել նա։ Այդ փոքրիկ արարածները աներևոյթ լեզիօնով գրոհ են տալիս մարդու վրայ՝ ու մանաւանդ նրանք աւելի անգութ են դէպի օտարականները. ձեռքերս արդէն նախշել էին այդ չարաճճիները և լաւ է, ինայում էին երեսս։ Բայց ինչ էլ որ լինի, ես ներում եմ քեզ, Բաթում, ներում եմ, որովհետեւ դու գեղեցիկ ես. ես ներում եմ գեղեցկուհիներին։

Պատահեցի ծանօթների. հարց ու բարե երկու կողմից ու փոխադարձ ողջոյններ։

12

«Բարի լինի, ուր այդպէս»—հարցըեց մէկը.
 «Ծովափ, գնում եմ մի քիչ երևակայելու».
 «Չէ, այդ չէի ասում, Բաթնմ էք եկել ուր գնալու:
 «Արտասահման, օտար երկիրներ, աշխարհէ աշխարհ»
 —«Օ՛, բարի ճանապարհ... լսել էինք... յաջողութիւն»
 «Շնորհակալ եմ»...
 —«Բայց մի քանի օր դեռ այստեղ էք, այնպէս չէ—հարցըեց մի ու-

ԵՒՀ:

«Այս, մտազիր եմ երկու-երեք օր մնալու:
 Բայց և այնպէս խօսքի բանուեցինք ու ծովափ չը կարողացայ հասնել,
 թէւ արդէն մի քանի քայլ էք մնում, ձիշտն ասած ես ուզում էի մենակ
 գնալ, մենակ լինել ծովի հետ, այդ իսկ պատճառով էլ այդ այցելութիւնս
 առժամ յետաձգեցի՝ ու մենք վերադառնք քաղաք:
 —«Նախաճաշելու ժամանակ չէ»—հարցըեցին ինձ.

«Ես չգիտեմ թէ Բաթումում ժամը քանիսին են նախաճաշում, բայց
 եթէ ես իմ ներքին պահանջին լինիմ, ամենայարմար ժամանակն է»—
 եբ սրախօսեցի ես:

Ու մենք մի երկու փողոց անցնելով մտանք առաջին պատահած սրճա-
 րանը հին ու նոր ծանօթնելով միասին:

Բայց մտանք սրճարանը ասելով, ես կրկնակի սխալ գործեցի. նախ որ
 դա սոճարան (կաֆէ չէր, այլ կաթնատուն) (МОЛОЧНАЯ), երկորդ որ մենք
 չը «մտանք», այլ դրսել նստեցինք, սրճարանի առաջ դրուած սեղաններից
 մէկի շուրջը Բաթումում, ըստ եւրոպական սովորութեան, տարուայ լաւ եղա-
 նակներին սրճարանների դուրսը, ուղղակի փողոցում է նստում յաճախորդնե-
 րի մեծ մասը և մաքուր, բացօղեայ մթնոլորտում է վայելում իւր սուրճը
 կամ թէյը:

Եւ մենք նստեցինք:


Խօսակցութեան նիւթ դարձան Բաթումը և Թիֆլիսը: Ես իմ խօսակից-
 ներին նիւթեր էի տալիս Թիֆլիսի գրական-հասարակական կեանքից, նրանք
 էլ փոխադարձաբար ամփոփ գծերով պատկերացնում էին իմ առաջ Բաթումի
 կեանքն ընդհանրապէս և հայութիւնը մասնաւորպէս:

Բաթումի հայութիւնը, ինչպէս երեսում է, ամուր կապուած է կենդրո-
 նական մտաւոր կեանքի հետ. աղջային, հասարակական, էջմիածնական խրն-
 դիրները իսկոյն արձագանք են գտնում այստեղ: Եւ լինելով կոստանդինա-
 պօլսի և Թիֆլիսի յարաբերութիւնների միջին կայարանը, նա լիակատար
 կերպով զիտակ է նման ազգային խնդիրների անցուղարձիւ: Ուսի փոքր
 ինտելիգենցիա, որ միշտ զլուխ է անցնում ամէն մի հրատապ հարցի:

Մենք բաժանուեցինք, ժամազրուելով երեկոյեան դարձեալ պատահել
 նոյն սրճարանում: Ես մի քանի ժամ զբաղուելու էի իմ մասնաւոր գործե-
 րով և այցելութիւններով:

Օրը թեքւում էր: Արկը իւր նարնջագոյն լոյսով ծառերի կատարներն
 էր ոսկէզօծում: Հիւրանոցից դուրս եկայ և ուղեորուեցի դէպի ծովափ: Բուլ
 վառի լայնութեամբ անցայ և դուրս դալով ծովեզրի աւազուտի վրայ, ծովի

ավերով քայլումոլոր գնում էի: Հեռում լողանում էին. ջուրը տաք էր, չը-
 նայելով աշնանային եղանակին: Ես առանձնացայ և Բաթումին ու մարդկա-
 յին հետքերին մէջք արած նստեցի աւազի վրայ ու նայում էի անծայրա-
 ծիր ջրերին:



Քարում

բուլվար

Ծովը: Որպիսի խորհուրդ, որպիսի սքանչելի տեսարան. մարդու աչքերը
 հանգստանում են ու կեանքի բեռլ թեթևանում, կարծես, երբ աջ ու ձախ
 կողմով եղած աւազները բնագգմամբ ջուրն ես նետում: Իսկ ալիքները գնում
 են ու գալիս շարունակ, միաւար, միաձայն, և այսպէս տարիներով, դարե-
 րով, անյիշելի ժամանակներից: Կարծես մի բան են ասում քեզ այդ կոհակ-
 ները, ու գույն ես որ չես հասկանում նրանց լեզուն: Մի տեսակ վեհ, ան-
 բացատրելի սրբազն տրամադրութիւն է տիրապետում ամբողջութիւնս,
 երբ նայում ես այդ ծովածաւալ հեղուկ տարածութեան ու չես կարողանում
 ըմբռնել նրա տիեզերական գաղտնիքը: Զգում ես որ գույն շատ ես փոքր,
 շատ ես աննշան ու չնչին՝ ու այդ տարերային երաժշտութիւնը չես ուղում
 խանգարել քո ներկայութեամբ: Ես այն կարծիքին եմ, որ հաւատի տարատ-
 մութիւնը մարգում է այն ժամանակ, երբ այդ մարդը հեռու է
 ասլրում բնութիւնից, երբ նա քողաքային կեանքի ժխորի մէջ, լարուած իւր
 մտածոր և փիզիքական կեանքով, մոռացութեան է տալիս իւր հոգեկան
 աշխարհը. իսկ ով բնութեան մէջ է ապրում, ով սիրում է բնութիւնը, ով
 հասկանում է նրան, նա չի կարող չըհաւատալ այն գերազոյն Ոյժին, որի
 կամքին են ենթարկուում տիեզերքի բոլոր երևոյթները: Եւ ինչ են մարդիկ
 մտածում եմ—ինչ նրանց մեծամեծ շէնքերն ու վիթխարի աշտարակները
 բնութեան անհասանելի երեցիթների և օրէնքների առաջ. նոյնը չեն ինչ որ
 երեխայի՝ խաղաթղթերից շինած անսկները թեթև քամու առաջ:

Ծով, որքան անհասկանալի ես գու մեզ, հասարակ մահակացուներիս
 համար, մանաւանդ ուշ երեկոներին, երբ մէր տեսողութիւնից կորչում է քո
 հորիզոնը: Ծանրացած վշտերով եկողը թեթևացած, հանգիստ է վերադառնում
 քո մօտից, ով գու գեղեցկութիւն յաւերժական: Որքան լաւ է հասկացել ու
 մեկնել քո առեղծուածային լեզուն ուուս բանաստեղծ Պեօտր Վէյնբերդ.

Безконечною пелѣною
Развернулось передо мною,
Старый другъ мой, море.

Անհուն ծառապվ պարզուել է իմ դէմ
իմ հին բարեկամ ծովը թափառէմ.
Որպիսի՞ կարող, հզօր, լաղթանդամ

Ոյժ կայ այդ անվերջ
Յաղթ, արքայսկան տարածութեան մէջ:
Ես եկայ այցի նրա գեղ ափին,
Տառապած, մաշուած կրծքով փլատակ
Կրուած թունալի կասկածանքների
Եւ իմ խորտակուած երազ-յոյսերի
Ժանր բեռի տակ:

Ես եկայ յայտնեմ անյատակ ծովին,
Որ վիճակիս հետ էլ չեմ բացում վէճ.
Որ այլ կոռուելու ոյժ չըկայ իմ մէջ,
Եւ որ բախտիս հետ հաշոտել եմ անդարձ
Նման անարզին.

Բայց երբ իմ՝ ովհաց ծովը պլրղաց
Անուն ծառալու

Եւ աղիծային անվեհներ թափով
Դոհակ ալիքներ խրոխտ համերգով
Երգեցին յանկարձ՝
Երզը բաջազօր վեհ ազատութեան
Երզը աճարկու հսկայ թևութեան,
Որը կոռիւլով տիրում է կեանքին,
Փոթորկեց խիւրյն, թնդաց իմ հոգին.
Ես այնպէս ամօթ, ամօթ զգացի
Ինքս ինձանից

իմ յոզնածութեան անմիտ վհատման
Մ'արած ասինի լրումի համար,
Որ ես դատեցի մինչեւ գերեզման
Անյաղի բախտիս հետ կոռուել քաջարար։

Խողթաբնցի ես սփափուած նորից
Կործածիշ, դատարկ
Մեղկ փոքրողութեան թեոը խայտառակ
Եւ իմ թշնամոն յաւառ ու անպարտ՝
Մ'արտի կոչեցի ստաջուայ նման

Իսկ ծովի փրփոր ժիր ալիքները
Ազատ թնութեան
Զարթնումի ոգուն արձագանքելով
Վազու են յառաջ, յոխրոտու թափով
Անի արագ, ա եի խիզախ—
Եւ գովբը կեանիր եւ ազատութեան
Երգում են անվախ*).

*) Թարգմ, Յակ, Յակոբեանի, «Գեղարվուհու» № 4:

Անհման է այս բանաստեղծութիւնը երբ զգում ես ինքդ բանաստեղծի հոգեկան զրութիւնը: Վեր կացայ թեթև, առոյգ, թոթափած ինձանից «մեղկ փոքրազութեան բեռլ խայտառակ»: ծովափից գոյնզգոյն խճաքարեր հաւաքեցի երեխայի նման ու թաշկինակիս մէջ լցըրած հիւրանոց վերաբարձալ:


Երեկոյեան պայմանաժամիս դեռ բաւական ժամանակ ունէի, բայց և այնպէս հիւրանոցից դուրս եկայ և զիխաւոր փողոցներով անցնելով, հետզհետէ մօտենում էի ծանօթ սրճարաննին:

Այդ ըստէին կառքով անցնում էր Բաթումի աւագերեց և. Մեսրոպ
Մելեհնը, որը, տեսնելով ինձ, կառքը
կանգնեցրեց. Հարց ու բարեկց յետոյ
հրաւիրեց ինձ միասին գնալ իրենց
մօտ: Ես հաճութեամբ ընդունեցի տէր
հօր սիրալիր առաջարկը, միենոյն ժա-
մանակ ներողութիւն խնդրելով որ ես
մի ժամից պէտք է նորից սրճարանում
լինեմ, ժամաղբութեանս մէջ անձիշտ
չը լինելու համար:

ԵՒՆՔ ՀԱՐԺՈՒԵցինք:

Երբ տուն հասանք, իմ վաղեմի ծառօթէ ։ Մերով պատիւ արեց ինձներկայացնելու իւր ընտանիքի անդամներին

Թէյի սեղանի շուրջը մեր խօսա-
կցութեան նիւթ պիտի դառնար, բնա-
կանաբար, մեր ազգային հասարակա-
կան-գրական կեանքին վերաբերեալ բն-
թացիկ հարցերը: Դա այն օրերն էր, երբ հրապարակի վրայ էին մեր մտա-
ւոր և ազգային-հասարակական կեանքին վերաբերեալ մի շարք կարեոր խըն-
դիրներ.—Վեհ. Կաթողիկոսի դիմումը նորին Մեծութիւն Թագաւոր Կայսեր՝
հայկական դատին պաշտպանութիւն հայցելու, հայ տառերի և տպագրու-
թեան կրկնակի յօրելեանները, գրական և ուսուցչական ֆօնդեր և այլն: Որ-
քան ներում էր մեր ժամանակը կարողացանք յայտնել միմեանց մեր ան-
հատական կարծիքներն այդ հարցերի մասին: Հ. Մելեան բացարձակապէս
դէմ էր համազգային յօրելեանների առթիւ հիմնուելիք դպրոցական ֆօնդին,
որովհետեւ—ասում էր նա—մեր դպրոցական գործը համահայկական գործ չէ,
այլ միայն լուսաւորչական հայերի, մինչգեռ երկու յօրելեանների տօնը
պատկանում է բոլոր հայերին և էջմիածինը չէր որ պէտք է գլուխ անց-
նէր. այդ զուտ գրական տօնին—աւելացրեց արժանապատիւ խօսակիցս, այլ
ազգային մտաւոր շրջանակներից ընտրուած մի մարմին, որով միայն կարելի
էր կրօնական տարբեր գաւանութիւն ունեցող մեր ազգակիցներին միահա-
մուռ մասնակցութեան հրաւէր կարգալ: Անշուշտ այս հարցի նկատմամբ ես
ունէի իմ առանձնական կարծիքը, բայց սիրով և բաւականութեամբ էի լլ-
սում Հ. Մելեանի խելացի առարկութիւնները, որովհետեւ խօսակիցս մի խըզ-



ձուկ գաւառական քահանայ չէր, այլ հայութեան անցեալին ու ներկային բաջ ծանօթ, խոնուն և հեռատես մի անձնաւորութիւն, ինքն էլ մեր զրական-հասարակական միջավայրին ոչ անծանօթ մի զրագէտ։ Այդ ամենից բացի գաւառական քաղաքներում քահանան այն չէ ինչ որ, օրինակ, Թիֆլիզում՝ այսպիսի տեղերում կրթուած, իւր յարգն ու արժանիքը ճանաշող քահանան, կարելի է ասել, մեծ ազգեցութիւն և հեղինակութիւն ունի իւր ժողովրդի մէջ՝ ու շատ ազգային-եկեղեցական կամ դպրոցական ինսդիրներին նա է իւր ուզածի պէս տոն տալիս։


Միւս հարցերի մասին մենք չըկարողացանք կանգ առնել, նախ որ իմ մեկնելու ըոտիները մօտենում էին, և երկրորդ, այդ օրերում, ինչպէս տեղեկացայ ասմատիրոջից, նոյն ինսդիրներն արծարծելու համար մի բազմամարդ ժողով էր գումարուելու ու այնտեղ կարող էինք արտայայտուել։

Վերագրձայ, ինձ հետ բերելով լաւ տպաւորութիւններ։

Մելեան քահանայից բացի Բաթումն ունի իւր երկրորդ հոգեորդ հովիւր, կարապետ քահանա Սալիսասեան, եղբայրը մեր անուանի բանասէր Ստեփան Սալիսասեանի, որ նոյնպէս մի յարգելի անձնաւորութիւն է, բայց արամազծօրէն հակառակ իւր պաշտօնակցից թէ խառնուածքով, թէ գաղափարով։ Վերջին կաթողիկոսական ընտրութիւններին աւելի ուժեղ արտայայտուեցին այս հայրերը ու բաւական երկար բանակոիւ մղեցին Թիֆլիսի թերթերում։ Մելեան որքան եռանդուն հակառակորդ Օրմանեան սրբազանի կաթողիկոսութեան, Մալիսասեան այնքան աւելի նրա եռանդուն պաշտպանը և ջատագովը։ Մելեան դիպլոմատ է, կրակոտ, համարձակ է և հատու հրապարակագիր է, սիրողներից աւելի յարգողներ ունի, մինչդեռ իւր պաշտօնակցին աւելի խոհեմ, զգոյշ և երբէք ոչ նախայարձակ իւր բանաւոր և զրաւոր վէճերի մէջ։

Ես դարձեալ սրճարանումն էի, այստեղ էին արդէն իմ ցերեկուայ ծանօթները, մի խմբակ էլ աւերացել էր և ինձ էին սպասում։ Եկել էր և իմ մտերիմ բարեկամ, Բաթումում հանրածանօթ Գրիգոր Գրիգորեանը, որին ես այսօր ցերեկը այցելութեան էի գնացել ու տանը չէի գտել։ Պ. Գրիգորեանին ես անուանել եմ Բաթումի Աղայեանը. Խօսքս անմոռանալի Նազարոսի մասին է, որի խառնուածքին և բնաւորութեան այնքան նման գծեր ունի պարոնը. Նրա պէս «Հոգով միշտ արի, զիսով ալկոր», ամէն մի հասարակական ու ազգային գործերի մէջ եռանդուն մասնակցից, դպրոցի հոգաբարձու. Նա և Մելեանի խմբի, մեծամեծների օպօղիցիայի պարագնութիւնը և նրա հետ միասին, համարեա ամէն անգամ, Բաթումից Թիֆլիս եկող պատմաւորը թիւներ ընտրութիւնների ժամանակ։ Այստեղ էր իմ հայրենակցից ընկերը, Բաթումի հայ երիտասարդութեան աշխի ընկնող անդամներից մէկը, Միսակ Տէր-Սիմօնեանը, որ ունի իր նուիրական գործունէութեան անցեալը և ներկայումս կառավարիչ է մի գործարանի։

Բոլորեցինք մի մեծ սեղանի շուրջը. Նրանք ինձանից էին տեղեկութիւններ հարցնում Թիֆլիսի զրական, դպրոցական շրջաններից, ես նրանց էի ուզում իմանալ Բաթումի հայ կեանքի մասին. Ես մենակ էի, նրանք շատ. իմ տուած տեղեկութիւնների մէջ քիչ նորութիւն կար նրանց համար, որովհետեւ Թիֆլիսի կեանքն համարեա ամէն մանրամասնութիւններով մէծ



Վ. ՄԱՆՈՒԵԼԱՆ

ԴՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

տեղ է բոնում մեր օրաթերթերում. մնում էր ինձ ասել այն, ինչ որ չի գրում լրագրութեան մէջ և ինչ որ խօսում է կամ կատարում է նեղ, մասնակի շրջաններում: Իսկ մենք, այսպէս ասած «թիվիսեցիքս», որքան քիչ ենք ճանաչում մեր գաւառները, այստեղի անցուգարձը, վարք ու բարքը, կենցաղը. և ես սիրով էի լսում նրանց ինձ հաղորդած տեղեկութիւնները: Սիրով լսեցի մանաւանդ այն լուրը, որ Բաթումի երիտասարդութիւնը մտագիր է հրատարակել մի հայերէն լրագիր, և նոյն իսկ հետևեալ օրը պատրաստական ժողով կար: Յարմար առիթ համարելով այդ օրերում իմ Բաթումում լինելը՝ որպէս գրական-հրատարակչական գործին ծանօթ անձնաւորութիւն, ինձ էլ հրաւիրեցին ժողովի, որ իմ խորհուրդներով կամ ցուցումներով կարողանամ գործին օգտակար լինել: Ես ուրախութեամբ ընդունեցի այդ հրաւերը:

Հետևեալ առաւօտեան սովորականից շուտ վեր կացայ ծովափ գնալու մտադրութեամբ, բայց տեսայ որ անձրեց մաղում էր համրօրէն. Բաթումը մտել էր իւր իսկական գերի մէջ. թողի այդ մտադրութիւնը և քաղաք իշայ. ցանկութիւն ունեի գլորոց գնալ այցելութեան, բայց գեռ շատ վաղ էր:

Թափառում էի քաղաքում:

Փողոցներում երեսում էին Միջին Ասիայից եկած շատ մահմեղականներ, իրենց բազմագունի և բազմատեսակ զգեստներով ու չալմաններով. ասացին որ ուխտաւորներ են, Մեքքիա են գնալու, յարմար շոգենաւի են սպասում:

Մրճարանների, կաթնասաններիներսերում թէ դրսում արդէն տեղ են բռնել նրանց մշտական յաճախրդները. և, զարմանալի է, առաւօտ կանուխ ու մանք նստել են արդէն թաւլի (նարտի), տաւա կամ շահմատ խաղալու. ծոյլ ժողովուրդ ենք հարաւցիներս, —մտածում եմ.—և իրօք, ժամերով նստում են այդ մարդիկ և տեսակ տեսակ խաղերով օրը մթնայնում: Մրճարանային ամէն տեսակ խաղեր եւրոպայում էլ տեսայ, բայց ցերեկը այստեղ միայն կէս ժամ, կամ թէկուզ մի ժամ խաղալով, ամէն մարդ շտապում է իւր գործին:

Բաթումի նախկին դրութիւնը չի երեսում այժմ. ուր է նրա եռուն կեանքը. նա անտեսապէս այն չէ, ինչ որ մի տասնեակ տարի առաջ էր: Վերջին ազատազրական շարժումների ժամանակ խոշոր զրամատէրերը Ռօթշիլդ, Մանթաշեան և ուրիշներ իրենց այստեղի գործերը լիկվիդացիա արին ու այդպիսով քաղաքի առեւտրա-արդիւնաբերական կեանքի մէջ մեծ փոփոխութիւն առաջ բերին: Այժմեան միջակ ֆիրմաների գործերն համարեա քիչ-քիչ կազզուրում են, իսկ փոքրերը գեռ հազիւ են «Ճայրը Ճայրին» հասցնում:

Ժամացոյցին եմ նայում, գլորոց այցելութեան գնալու ժամանակ չէ արդեօք. ուզում եմ մեծ դասամիջոցին գնալ, որ աւելի տեսողական լինի իմ տեսակցութիւնս ուսուցչական խմբի հետ: Դեռևս շուտ է. դարձեալ մի ժամ միջոց ունիմ. իսկ ես մինչև այդ ժամը լրանալը, իմ ընթերցողներին պատմեմ Բաթումի անցեալի մասին:

Բաթումը Հռոմէական կայսերութեան ժամանակ յայտնի է եղել Բատիս անունով և ծառայել է որպէս զինուրական բանուկ նաւահանգիստ:

Այսուհետեւ երկար ժամանակ երբեմն անյայտութեան մէջ մնալով, երբեմն զանազան տէրերի պատկանելով և անուան մէջ փոփոխութիւններ կրելով, XV-րդ դարում այդ քաղաքն անցել է Թուրիացի իշխանների ձեռքը, մինչև որ հետեւ դարում Տաճիկները կոստանդնոլուսի, Տրավիզնի հետ միասին գրաւել են և հարաւարևմտեան Վրաստանը, Ալալցխան և Բաթումը, (1547): Մինչև 1878 թուականը, այսինքն մինչեւ Ռուսաց ձեռքն անցելը, Բաթումը եղել է մի խղճուկ քաղաք հողաշէն և փայտաշէն տներով ու խանութներով, նեղլիկ, անկանոն ու անմաքուր փողոցներով, ինչպէս մի թուրքական գաւառական փոքր քաղաք: Բաթումը լաւ ճանաչող մեր յարգելի գրագէտներից մէկը իւր ուղեգրական յօդուածի մէջ ահա ինչպէս է նկարագրում այդ ժամանակի Բաթումը:—

«Նաւահանգիստ կը յաճախէին միայն տաճկական մակոյկներ և առագաստաւոր նաւեր ծովու կողմէն և կայեղ կոչուած (ըստ տեղացոց) իսկ ուսւաց կափուկ կաօք նաւակներ Արդուինէն՝ ձորոխ գետի միջոցաւ: 60-ական թուականներուն էր միայն որ առաջին անգամ ուսւական Պ. Օ. Ո. և Տ.՝ Ընկերութիւնը մտածեց երթևեկութիւն հաստատել մէկ կողմէն Ռուսաստանի ու միւս կողմէն կ. Պոլսոյ և Բաթումի մէջ: 1872 թուին համեմատաբար իր նախորդ վիճակին՝ թեթև կիսդանութիւն մի կը տիրեր քաղաքին մէջ. Խրճիթներու թիւը 500-ի հասած էր և նա՝ իրբե ծովեզրեայ գիխաւոր կէտ ամբողջ լիվանայի (Սրբուինի) Լազիստանի և Աջարայի, փոքրիկ կարեորութիւն մ' էր սկսած առնել այն գաւառներու համար, թէն զարձեալ խեղճուկ, աննշան և աւազակարարոյ բնակիչներով լի: Բաթումը կը համարուի Լազիստանի սանչակի կենարոն, ուր կը նստէր միթեները, իսկ ուսւաց առևտրական շահերը պաշտպանելու համար սուսական հիւպատոս էր՝ շանակուած: Գիխաւոր կենդանութիւն տուողն Արդուինի, Արտանուչի և Կարսի հայ վաճառականներն էին, որոնք Բաթումի և Կարսի նահանգաց բովանդակ առևտուրն իրենց ձեռաց մէջ կենդրոնացուցած, անընդհատ անցուղարձ կասերը կ. Պոլսոյ և ետ, այստեղի միջոցաւ կը փոխադրին դէպի երկին ներած կ. Պոլսոյ մեծ քանակութեամբ իրենց բերած ապրանքը: Ասիական փոքրիկ և անկարդ քաղաքի մ' ամէն յատկութիւններն ուներ այն ժամանակ Բաթում: տեղույն հաստատուն բնակիչներն լազերն ու աջարացիք էին, որոնց նեղ, աղտոտ և փայտաշէն փոքրիկ խանութներու յիշատակն, ուր սեղական բերքեր կը ծախուէին, կամ քանի մը արհեստաւորներ կը նստէին, գեռ մինչեւ վերջին տարիներս չէր կորսուած և այն խանութներու տեղը կը կոչուէր աջարա շարշըլը, որ այժմ արդէն անյայտացած կամ կատարելապէս կերպարանափոխ եղած է:

«1877-ի պատերազմին ժամանակ Բաթումի ցամաքային բանակն Օսմանեան նաւատորմղի ներկայութեամբ ոյժ առած ու անկէ հովանաւորուած՝ մէծ Ընդդիմութիւն 15-ին վերջնականապէս կնքեց խաղաղութիւնը, այն ժամանակ միայն Օսմանեան հրայանձին իշխան Սվետապօլկ-Միքսկիի որ օգնական էր Կալկանեան փոխութիւնն այն 461 քառակուսի ուսւական մղնու երկրին մէջ որ Բեռլինի դաշնագրութիւնը առաւ վերջերն էր, երբ երկրորդ անգամ տեսայ ևս Բաթումը՝ կ. Պոլսոյ վերագրածիս: Բաղարդէն տեսդային գործունէութիւն առած էր, աներ և խանութներ միմեանց յետնէ կը պատերազմի արհաւերքներէն բոլորովին ազատուած՝ նոր խաղաղութիւնն մէջ այժմ շնուրէին, տեղական վաճառականութիւնը ասանապատիկ ընդարձակութիւն էր առեր,

^{*)} Հայոց Օբայտ Պարոհած և Տորգովութեան Ընկերութիւն նաւագնացութեան և Առաքություն:

և ամէն էռոմէն հոս թափուող զանազան երկրացիներն Բաթումի գործերն ու հողերը

Բաթումը բարգաւաճում էր օրը օրին, մանաւանդ որ ուսւակարութիւնը այս քաղաքի գրաւումի օրից մինչէ 1888 թ. յայտարարել էր պօրտովիրանից և ամէն ազգի առևտրական նաւեր ազատ ել ու մուտ ունէին ²⁾



Յարօւմ Ռուսաց հկեղեցին

կոչուեց Բաթում-Բագու (1883.) ³⁾:

Բաթումի բնակչութեան թիւը քաղաքն ուսւաց ձեռքն անցնելիս 1000-ի չափ է եղել միայն. 1890 թուականի յունիսի 17-ի միօրեայ մարդահամարի ժամանակ եղել է արդէն 18,123, իսկ ներկայումս հաշում են 30,000-ից աւելի ⁴⁾: Տեղական ազգերն են վրացիներ, ուռմաներ, հայեր, յոյներ և մինչդեռ կան նաև թուրքեր, հրէաներ, ինչպէս նաև իտալացիք, գերմանացիք և ֆրանսիացիք:

«Ճառ հետաքրքրական տեսարան կը նծայէ Բաթումի տեղական ազգաբնակութիւնն իւր այլացի և այլակող տարերց միաւորութեամբ—ասում է Տիւրեան իւր յօդուածում—չորսիւր գրեթէ իւր միջազգային դիրքին և առևտրական ընդարձակ ասպարիզին՝ Բաթում ամէն կողմէ եկած բնակիչներ ունի իւր մէջ. 42 ցեղի վերաբերեալ ժողովուրդ կայ հոս, 48 լեզու կը խօսուի Բաթումի մէջ»:

Եթէ այս 48 լեզուն ոմանք առասպել համարեն, դրա պատասխանատուն անշուշտ նրա հեղինակն է լինելու. բայց իմ տպաւորութիւնն էլ իխատ ուժեղ է ազգերի, բարբերի, սովորութիւնների և նիստ ու կացի այլազանութեան նկատմամբ, չընայելով որ ամբողջ երկու տասնեակ տարի է անցել վերոյիշեալ նկարագրութիւնն արուելուց:

Բաթումը իսկ որ ազգագրական մի կենդանի թանգարան է, որ ազգի, կամ մեր երկրի որ կողմի ներկայացուցիչ էր ուղում, այստեղ կը գտնէր. հայ բարբառներ եթէ ուղում էք զրի առնել, կարող էք փոխանակ չայտանի գաւառները ըրջելու, գալ այստեղ ու տեսնել մշեցի, վանեցի, բիթլիցի, արապիզոնցի, կարսեցի, պօլսեցի, թաւրիզեցի և ուրիշ շատ տեղացի:

¹⁾ Կ. Տիւրեան.—«Հանդէն Ամսօրեայ» 1893, էջ 25:

²⁾ «Պօրտօֆրանկո» կոչում են այն նաւահանգիստները որոնք կառավարութիւնից արտօնութիւնն են ստանում ապրանքներ արտահանելու և ընդունելու առանց մաքսի: Այս արտօնութիւնը արտօնութիւնը առվարար նոր նաւահանգիստներին, որպէսզի սրանով գրաւեն օտար նաւերի երթեեկութիւնը և քար ներմուծուող ապրանքներով կենդանացներ տեղային առևտուրը: Ռուսաստանում պօրտօֆրանկո յայտարարուել են իրենց ժամանակին նաև Օդեսան և Վլադիվոստոկ:

³⁾ Բաթումը, թնդուղիով միացած է Արդուինի, Արտահանի և Ալալցխայի հետ:

⁴⁾ Հայոց Կալենդար Սվորին 1913 թ.

հայեր. Էլ չեմ խօսում զարաքաղցի, շամախեցի, թիֆլիսեցի, ալէքսանդրապոլիցի, երևանցի և ռուսահայ զանազան վայրերի գաղթականների մասին։ Բայց պատմութիւնս քաղաքի մասին քիչ յետոյ կը շարունակեմ, արդէն հայոց դպրոց գնալու ճիշտ ժամանակն էր։

Տասնեհինդքսան ըոպէից, ես արդէն դպրոցումն էի։

Շէնքը միյարկանի է բայց նոր է և բաւական յարմարութիւններ ունի՝ ու տանելի է մի գաւառական դպրոցի համար։ Ասացին որ շինութեան դործի համար մեծ ջանքեր է գործ դրել իւր ժամանակի հոգաբարձուներից։ Աւետիս Խոջամիլիսանը։ Դպրոցն ունի ընդարձակ, մաքուր բակ երեխանների խաղու համար։ Ուսուցչանոցում առաջինը պատահեցի աւագ ուսուցիչ պ. Թագէոս Պետրոսեանին, որ ինքը ծանօթանալով ինձ՝ ծանօթացը եց նաև այնտեղ եղող ուսուցիչներին և վարժուհիներին։ Դպրոցական սարք ու կարգը, պարագաները, քարտէզները, կենդանաբանական և բուսաբանական տախտակ օրինակները ուրախալի տպաւորութիւն թողին։ Զգալի եղաւ որ ջանանէր հոգաբարձութիւն ունի։ Դպրոց եկաւ հոգաբարձուներից մէկը, որի հետ մըտանք դասարանները։



Բարեմ

Հայոց դպրոց, հոգաբարձական և ուսուցչական կազմը 1912—13 ուս. տ.

Ասացին որ դպրոցի անտեսական դրութիւնը վատ չէ. մուտքը կազմում է ծխական կանոնաւոր տուրքը և տարեկան մի անգամ կազմակերպուող երեկոյթի արդիւնքը։ Դպրոցը երկսեռ է, ունի 1—IV բաժանմունքներ 150-ի չափ սաներով։

Կառուցումը նոր աւարտած ժամանակ առաջին անգամ Բաթումի ժամանել Մկրտիչ կաթողիկոս Խրիմեանը, որը և ընդունուել է դպրոցում։

Գալիցինեան ռեժիմի օրերում երբ հայոց եկեղեցական կալուածքները յար քունիս էին զրաւում ու դպրոցները փակում միմեանց յետելից, Բաթումի ծխականների մէջ միտք է յղացել վաճառել այս շէնքը, և ինչպէս ինձ հաղորդեցին հանգուցեալ Արխտողոմ Յովհաննիսեանը, որ այն ժամանակ այստեղ լաւ դրբի ու յարգանքի տէր է եղել, ասել է, «Բնչպէս կարելի է ծախել այն շէնքը, որը Խրիմեան Հայրիկ է ընդունել իւր յարկի տակ և ուրեմն պատմական նշանակութիւն ունի»։ Շէնքը մասնաւոր սեփականութիւն դառնալուց ազատում է և կարձ միջոցում կառավարութեան «հովանու» տակ մնալուց յետոյ՝ ինչպէս ամէն տեղ, այստեղ էլ վերադարձում է հայերին։




Բարեմ

Հայոց դպրոց, ուսուցչ. խումբը աւարտող աշակերտութեան հետ

Հետաքրքրուեցի իմանալ այս ծխական դպրոցից գուրս Բաթումի հայաշակերտութեան մասին։ Տեղեկացայ որ քաղաքային դպրոցներից մէկը կոչւմ է Հայկական։ — (Первое Армянское Город. Училище), ինչպէս որ կան նաև Ռուսական, Վրացական (2 հատ) Յունական և Մահմեդական քաղաքային դպրոցներ։ Հայոց դպրոցի անօրէնն է Գրիգոր Պալեան։ Պետական դպրոցներում կան՝ տղայոց գիմնազիօնում մօտ 70, օրիորդաց գիմնազիօնում մօտ 40 հոգի։ Վեցգասեան, Մարիմեան, Սրհեստագիտական և տարրական դպրոցներում նոյնպէս կան հայ աշակերտներ, որոնց թիւը 30-ից չի անցնում։

Դպրոցից դուրս եկայ ու գնացի եկեղեցի. վիքր, բայց մաքուր, սրբատաշ մի գեղեցիկ շէնք է, (Քութայիսի սպիտակ քարից և Անապայի աղիւսից է շինուած)։ սիւներ չունի։ Սեղանը պարզ է, աւելորդ ճոխութիւններ չեն երկում։ Խաչկալը ճաշակաւոր ու գեղեցիկ է, գործ նկարիչ Արշ. Ֆեթվաճեանի։



Տարբեւ

Հայոց Տեղակացին

Կամ մի քանի սիրուն իւղաներկ պատկերներ—Տիրամայը, Քրիստոսի Յառութիւնը և Գեթսեմանին, որոնք յաջող ընդօրինակութիւններ են և սիրուն:

Բաթումի հայերն սկզբում ունեցել են մի փայտաշէն հասարակ եկեղեցի իսկ ներկայ եկեղեցու հիմքը գրել է Սրբաւակէս եպ. Սեպակեան իւր թեմ. առաջնորդութեան ժամանակ: Աւարտաման և օծման հանդէսը կատարուել է ներկայ Սուրբնեան կաթողիկոսի առաջնորդութեան օրով, 1900 թուին (դեկտ. 26):

Բաթումի հայոց եկեղեցին ունի 900 ծուխ, որոնցից 10—15 առւն հաշվուի բաթումցիներ են. մասցածը գաղթական հայեր են մեծ մասամբ թիւրքահայ գաւառներից: Ունի, ինչպէս վերև յիշեցինք, երկու քահանայ, որոնք ոռնիկ են ստանում եկեղեցական հոգաբարձութիւնից և իրենք բոլոր պաշտօնակատարութիւններից ստացած հասոյթը բերում են եկեղեցին նոյն իսկ պետական դպրոցներում որպէս կրօնուսոյց ստացած ոռնիկները բերում յանձնում են հոգաբարձութեան: Սա, եթէ չեմ սիստում եղակի օրինակն է Կովկասի հայոց մէջ: Բագուն, յիշում եմ, մի քանի տարի առաջ ցանկացաւ նոյն բանն անել, բայց քահանաները չը համաձայնեցին^{*}):

Բաւական գաւեշտական է թւում այն, որ Բաթում քաղաքը իւր

^{*}) Աշխատութեան տպագրութեան ժամանակ արդէն, ինչպէս պատահմամբ լսեցի, Բաթումից էլ այդ օրինակելի սովորութիւնը:

երկու քահանայով կազմում է Թիֆլիսի թեմում մի առանձին Գործակալութիւն:

Եկեղեցուց դուրս եկայ գնացի մի քանի տեղեկութիւններ իմանալու կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան տեղական ճիւղի մասին: Բացուել է 1908 թուի տպորիլի Յին: Անդամների թիւը հասնում է 150-ի (Նախագահ Մեսրոպ աւ. ք. Մելեան): Գլխաւոր գործունէութիւնը եղել է թիւրքահայ գաղթականներին հայրենիք ճանապարհելը, մասնակի նպաստներ է տուել տեղական կարօտ հայերին և երեմնապէս օգնութեան է հասել ծխական դպրոցին:

Տեղական հայ կաթոլիկ համայնքը հոգեոր վարչական կազմով պատկանում է Արդուինի աւագութեան որը և Թիֆլիսի առաքելական Կառավարչութեան: Ուստաստանում կաթոլիկ հայերի ընդհանուր թիւն է ըստ նորագոյն պաշտօնական տեղեկութիւնների, 61, 534, Արդուինի աւագութեան 8,537, և Բաթումի ժողովրդապետութեան 916 *): Բաթումը ունի քարաշէն եկեղեցի, կառուցուած ծխականների ծախսով 1879 թուին Արդուինի թեմակալ Յովհաննէս եղիսկոպոսի օրով: Ներկայումս ժողովրդապետն է Տէր Դանիէլ Աստառուրեան, որը և կրօնուսոյց է իրենց ծխական վարժարանի: Դեռ գպրոց չունեցած ժամանակ հայ-կաթոլիկ երեխաններն յաճախում էին Լուսաւորչական հայոց ծխական դպրոցը, մինչեւ որ 1894 թուին բացուեց սեփական թէկ խալֆայական դպրոց, և որտեղ ներկայումս սովորում են 40-ի չափ երկսեռ երեխաններ:

Բաթումի ժողովրդապետութեան են պատկանում նաև այն բոլոր կաթոլիկ հայերը, որոնք ապրում են Փոթի, Օչեմչերի, Սուխում, Գաղրի, Գուշակուտի, Աղեր, Սօչի, Թուապսէ, Ճուգդա, ինչպէս նաև Քութայիս քաղաքի մէջ և Անդրկովկասեան երկաթուղու երկարութեամբ Բաթումից մինչեւ Միխայլօփ կայարանը առանց վերջինի: (462 հոգի):

Կէսօրից յետոյ մտայ մաքսատունը որ տեղեկանամ թէ արտասահմանից պատկերագրդ զրքեր կամ պարբերականներ Կովկաս մտնելիս մաքս վճարւում է թէ ոչ: Որոշակի պատասխան չը տուին ժամանակի ուշ լինելու պատճառով. այն պաշտօնեան որի անմիջական դրծն էր դա, բացակայ էր պաշտօնատնից: Բայց մի զուգատիպութիւն էր կարծես, երբ տեղեկացայ որ այդիսկ աստիճանաւորը, պ. Ֆօն-Բագեր, ամուսինն է իմ նախկին աշակերտունու, բաթումցի մի հայունու: Սիրով մտածեցի գնալ նրանց տուն, թէ այցելութեան և թէ ինձ հետաքրքրող տեղեկութիւններն իմանալու: Մաքսատնից շատ մօտիկ էր Ֆօն-Բագեր ամուսինների բնակարանը: անտեսնկալ էր տիկնոջ համար իմ յանկարծ երևումը նրանց մօտ. ծանօթացրեց իւր սկսրոջը, որ մի բարի գերմանունի էր ու յայտնեց միենոյն ժականակ որ ամուսինը տանը չէ: Տաճկական քաղցը սուրճի փոքրիկ ֆինճաններն առաջեկան ու տաճտիրուհին զեռ ևս աշակերտունու ամօթխածութեամբ ու շարժուձնուլ լցրեց փրփրուն սուրճն ու հրամցրեց մեզ:

*): ... Каталогъ армяно-католич. духовенствъ и церквей въ Россійской Имперіи. Составленъ по распоряж. Е. Въс. архим. Саркиса Терь-Абраамяна, апостольск. администратора арм.-католиковъ въ Рес. Имп. 1914. Тифлісъ.

Երբ ես «մնաք բարով» էի ասում, իմ մնաս-բարովին «ց'աեսութիւն»-ով. պատավանեցին, որպէսզի քանի դեռ Բաթումումն եմ դարձեալ այցելութեան գնամ:

Երեկոյեան ժողովի էի, Գրիգորեանցի տանը. Երեկուայ ծանօթներից բացի այսօր կային և նորանոր մարդիկ, բոլորը՝ մօտ երեսուն հոգի:

Բաթումում թերթ հրատարակելու հարցն էր ժողովի գլխաւոր և միակ նիւթը: Երկու երեք ժամ տեսք մտքերի փոխանակութիւնը և թեյաբանութիւնը: Ես սրտով ուրախանում էի թէ ինչպէս լուրջ վէճի, առարկութեան խնդիր է գառնում Սև ծովի ափին մի հայոց թերթ հիմնելու խնդիրը և այդ թերթի ինչ ուղղութիւն կրելը: Վերջապէս համաձայնութեան եկանք. խըմբագիր-հրատարակիչ ընտրեցինք պ. Գրիգորեանին, թերթի անունն էլ դրուեց «Բաթումի Զայնը»: Շնորհաւորեցինք, բարեմաղթութիւններ արմաք, ցանկացանք ամենայն յաջողութիւն, և ուշ գլշերին ցրուեցինք մեր տները, ի՞նչ եղաւ այնուհետեւ, ես չըգիտեմ, բայց ահա մօտ երկու տարի է անցել ու դեռ ես չի ճնուել մեր մկրտած երեխան:

Բաթումն էլ, ինչպէս երկում է, Թիֆլիսից յետ չի մնում իւր ժողովասիրութեամբ. հետեւալ առաւտեան դարձեալ ժողով կար, դպրոցի դահլիճում. այս անգամ արդէն բազմամարդ, ծխական ընդհանուր ժողով էր: Լուրջ հարցեր էին որոշուելու. նախ չայ տառերի և տպագրութեան յօրելեաններին ինչ կերպ մասնակցելու խնդիրը. Այս այն օրերն էին, Երբ էջմիածինը առանձին էր ուղում տօնել ու իւր շրջաբերականներն ուղարկել թեմական և գաւառական վարչութիւններին, Թիֆլիսն առանձին՝ լրագրութեան մէջ հայ հասարակութեան անունով տպագրած հրաւէրներով: Բաթումը որոշեց յետաձգել այդ խնդիրը, մինչև որ էջմիածնի և Թիֆլիսի մէջ հաշտութիւն կայանայ: Երկրորդ խնդիրն էր պատգամաւորութիւն ուղարկել էջմիածին, որ Բաթումի հայ ազգաբնակութեան կողմից խնդրի վեհափ. Կաթուղիկոսին, որ նա թիւրքահայ գատի պաշտպանութեան համար դիմումն անի Նորին Մեծութեան թագաւոր կայսրին: Հարցը ամենաքի սրտին շատ մօտ ընդունուելով, շուտով ընտրութիւն կատարեցին և միաձայն պատգամաւոր ընտրուեց Մեսրոպ աւ. ք. Մելեան: Այս ժողովում առիթ ունեցայ տեսնելու Բաթումի հայութեան համարեա բոլոր առաջաւոր մարդկանց:

Վերադարձայ հիւրանոց. շվեյցարն յայտնեց, որ հեռախոսով հարցը ել են և խնդրել որ երբ առն վերադառնամ, զանգահարեմ այս-ինչ համարը, Զանգահարեցի...

Ծանօթներիցս մէկն էր, հրաւիրում էր իրենց հետ այդօր գնալ Ախալ-շէն գլուղը. «Լաւ տեսարան է—ասում էր—եղանակն էլ հրաշալի. Ժողովուրդ շատ հաւաքուած կը լինի, եկէք միասին զնանք»: Ես ցաւելով մերժեցի իմ բարեկամի սիրալիք առաջարկը, որովհետեւ խօսք էի տուել նոյն օրը գնալու մը ընկերի մօտ:

Ժամը երկուսն էր, երբ պ. Ս. Տէր-Սիմէօնեան եկաւ մեր սովորական սրճարանը որ մենք պատահենք ու զնանք իրենց մօտ:

Կառք նստեցինք ու զնացինք Շխեանցի գործարանը որի կառավարիչը մինելով, այստեղ էլ ապրում էր պարոնը:

Երբ տուն հասանք, եռ ցանկութիւն յայտնեցի որ ուզում եմ տեսնել գործարանը աշխատանքի ժամերին:

Որքան էլ բնութեան գեղեցկութեան և գեղարուեստի սիրահար, այդ օրը ես մեծ հաճոյք զգացի, որ Ախալէնի հովասուն ու խաղաղ բլուրները բարձրանալուց զերադասել էի աղմկալից գործարանի այցելութիւնը: Ես ամպրոպային բարձրանալու համար իմ հոգւով, բայց ես սրտով միայած եմ աշխատանքի և շնարար կեանքի հետ. ես իմ մէջ միացնում եմ գեղեցիկն ու կեանքը. ինձ համար կեանքը առանց գեղեցկութեան, գեղեցկութիւնն առանց կեանքի սին և անառժէք բաներ են:



Բարում

Կոմիտաս վարդապետը Բաթումի երգեցիկ խմբի հետ

Ու պ. Սիսակ մէկ մէկ առաջնորդեց ինձ գործարանի բոլոր բաժանմունքները. այստեղ տախտակները հարթում ու տաշեղները պէս պէս եղանակներով վեր շպատում, այստեղ շոգեշարժ սղոցներով տասից աւելի միհմանց վրայ դարսած տախտակները վայրկենաբար մաս-մաս լինչպէս վարունկը գանակի տակ: Երբորդ տեղը այդ կտրտուած տախտակներից արկներ են շինում, չորրորդ տեղը թիթեղեայ արկներ են պատրաստում, որ մաքուր, պատրաստի նաւիթ ածեն ու յանձնեն շոգենաւներին արտասահմանեան զանազան երկներ ուղարկելու: Մի ուրիշ տեղ հակայ մօտօրները իրենց ահեղաձայն գլուղիւնով ու զանազան բաժանմունքներն ուղարկած փոկերով շարժունութիւն և կեանք են տալիս բոլոր մեքենաներին: Մօտօրները սիրան են կարծես զործարանային մէծ օրգանիզմի:

Կառավարիչը կարգադրութիւններ ու ցուցումներ էր անում ամէն բա-

Ժանմունքում, ուր մենք անցնում էինք ու ջլուտ բանորները և յարգում և սիրում էին իրենց ընկեր կառավարչին ու գոհացուցիչ, բաւարարող պատասխաններ առաջին ժպտերես:

Узнѣкѣ ѣркѣ դարձեալ կը մնայինք, բայց յանկարծ—«Барыня проситъ обѣдать»—լսուեց տաշեղների բլուրի յետեից լոյս ընկնող ուռւա աղախնի ձայնը:*

Նա եկել էր մեզ յիշեցնելու որ ճաշի ժամանակն անցնում է:
Մեսք նստեցինք սեղան:

Հակերս նոր էր ամուսնացել և ես տիկնոջը դեռ չէի պատահել։ Ծանօթացը էր։ Ե. Ա.՝ ուսւած էր։

Երեկ Փօն-Բաղերի ընտանիքում էի հիւր, նա ինքն էր օտար՝ կինը հայ, այստեղ ինքը պարոնն է հայ, տիկինը օտար: ԿТО-ЖԵ՞? Աղքայնապէս տուժողը միշտ հայ կողմն է լինում. լինի նա այր ամուսինը թէ կինը. բայց ներկայ դէպրում եթէ ես այդ կարողանամ ասել առաջին ընտանիքի վերաբերմամբ, չեմ կարող ասել երկրորդի համար, երբ հայ կողմը ինքը ապառաժի պէս է կանգնած իւր համոզմունքների մէջ և կարծէք նրա ինքնուրոյւթեանը չի խանգարում որ իւր կեանքի ընկերուին օտար է: Երբ մէկը պատռազգաց է և մաքուր հայրենասէր է, իւր օտար ամուսնուն էլ կարող է գաղափարականապէս իւր կողմը դարցնել. իսկ եթէ ինքն էլ անգիտակ է ու անտարբեր դէպի իւր հայրենի շահերը, չը գիտէ, կամ չի խօսում մայրենի լեզուվ, այդպիսիների ամուսնութիւններն են որ կորտած են համարում ազգային ամբողջութեան տեսակետից, ու նրանց ժառանգներն էլ ծագումով կամ մականունով միայն կարող են պատկանել այս կամ այն ազգին: Այլապէս, եթէ այս հանգամ անքները չը լինեին ամուսնական խնդիրներում, հանգամանքներ, որ ես կարեոր նշանակութիւն եմ տալիս, հեշտ կը լինէր ասել՝ «սիրոյ մէջ չէիք խտրութիւն ոչ հրէի և ոչ հեթանոսի»:

Բայց սրանք իմ այժմեան խոհերն են որ յարմար առիթ գտնելով զրի եմ առնում, այնտեղ, այն ժամանակ, ճաշի սեղանին այսպիսի հարցերով չըդադրեցինք. մեր խօսակցութեան նիւթն էր Բաթումի գործարանային և առեւտրա-արդիւնաբերական կեանքը:

Յայսնի է որ Բաթումը մի փոքրիկ Բագու է իւր նաւթային գործերով. բայց ոչ հանգերով, այլ իւր միջնորդի գերով: Բաթումը խողովակն է Թիֆլիսի վրայով Բագուից հոսող նաւթի և նաւթային ամէն տեսակ նիւթերի արտասահման ուղարկելու գործում: Այսաեղի գործարանները թիթեղներից ամաններ են պատրաստում և նորից փայտէ արկղների մէջ դնելով ճանապարհ գցում Եւրոպայի, Ասիայի և Աֆրիկէի զմնազան վայրերը տարեկան աւելի քան 50 միլիօն փութ, այսինքն մօտ երեք քառորդը Բաթումից գուրս եկած նաւթի: Շվեդացի Լիւգվիդ Նօրել առաջինն է եղել որ Բաթումից նաւթ է արտահանել Եւրոպա 1881 թուին: Նօրել եղբայրներից և Ռօդշիլից յետոց առաջնակարգ Փիրմաններ են եղել իւր ժամանակին հայերից Մանթաշեան, Ծովիանեան, Խաչատրեան: Տարեկան 20 միլիոն բուլու արտահանութիւն և 12 միլիօնի չափ ներմուծում սովորական բան է եղել Բաթումի համար, Ներկայումս Բաթումն այն չէ ինչ որ առաջ էր. յեղափոխութեան տարինե-

ըին մեծ ֆիրմաները փակուեցին գործադույների պատճառով. և այժմ համեմատաբար փոքրիկ մասն է մնացէլ բաթումեան գաւառաշրջանի (օկրոսող) գործարանային կեանքի: Ահա մի ազիւսակ որ վերցնում ենք կովկասի փոխարքայութեան դիւանում հրատարակւող „Կաք. Կալենդար“-ից (1914):

ԳՈՐԾԱՐԱՆԱՑԻՆ ԿԵԱՆՔ

ԲԱԹՈՒՄԻ ԳԱԻՍՈՎԱՇՐՋԱՆՈՒՄ 1912

Նիւթ	գործարան	ընդլի	բանտու
աղիւս	10	1,000	23
աղիք (լար)	5	2,800	18
տղօրիք	293	800	21
արագ	9	63,750	51
արկլ	4	333,300	375
արհեստական ջրեր	5	57,500	55
բրուտեղեն	1	800	20
գինի	60	1,200	60
թէյ	2	15,000	84
ծխախոս	2	76,500	265
կաշի	21	9,350	43
կիր	4	450	10
ներկեր	2	42,000	41
չուզունի գործեր	1	19,880	30
պապիրոսի թռւղթ	2	14,008	5
պղնձաձոյլ գործեր	3	2,793,000	1441
տակառագործակ.	5	207,000	163
ցինկի գործեր	1	100,000	26
	430	3,725,730	2,731

Թէկ գործարանային կեանքն այժմ նախկին ծաւալը չունի, բայց թէյի
և մի քանի պտուղների արտահանութիւնը գնալով աւելի մեծ չափեր է ըն-
դունում, և այդ, շնորհիւ Բաթումի օրինակելի կլիմայի և հողի: Հողի
բացառիկ յատկութեան համար է նոյնպէս որ Բաթումում հիմք է ձգւում
ներկայումս մի մեծ և ընդարձակ բուսաբանական այգիի, որը ըստ երեսյթին
շատ նշանաւոր պիտի լինի իւր տրօպիկական բազմացեղ բոյսերով: Բա-
թումն ինքն արդէն ձմերային կլիմատիք կայարան է:

Ճաշից յետոյ տաճարի բռուհին բարի եղաւ մեղ զբաղեցնելիք ալբօսանրով և
գեղարուեստական բացիկների հարուստ ժողովածուով։ Գործարանային աղ-
մկոտ կեանքում մըրի, ծխի մէջ, ուր մարդկային ֆիզիքական ոյժերն են
մկոտ կեանքում մըրի, ծխի մէջ, ուր մարդկային ֆիզիքական ոյժերն են
սպառում, ուր հոգեկան կեանքն է բացակայում, մարդ պահ մի մոռանում
է գեղեցիկ աշխարհը. բայց ահա մի քանի սիրուն գրաւիւրներ, ահա գաշնա-
մուրի մի քանի ակլորդներ, նորից քո մէջ մըցում են առաջ բերում իրական
և վերացական զաղափարների։ Բայց գործարանը որքան նիւթ է մատակարա-
ռում ոչալիստ գեղարուեստագէտի համար, և որքան մեծարժէք են Վեր-

*) *Տիլուհին խողըսմէ է ճաշի գտլ:*

Է մեկնում մեր շոգենաւը: Տեղեկացայ. Ռուսական Բնիկերութեան „Цесаревичъ Георгій“ շոգենաւն էր, մեկնում էր զիշերուայ ժամը 12-ին. ուրեմն ամբողջ մի ցերեկ և մի երեկոյ ժամանակ ունէի գեռես:


Մի քանի խօսք էլ Բաթումի ներկայի մասին:
Բաթումի նահանգաշրջանը (օblastъ) ունի երկու գաւառաշրջան (օкругъ)—Բաթումի և Սրտովինի: Նահանգական կազմավարչական միւս կապերով (գաւառասահական, ուսումնական, հողային և այլ) Բաթումի նահանգաշրջանը ենթարկում է Քուշիսի նահանգապետութեան:

Բաթումն ունի քաղաքային ինքնավարութիւն. քաղաքավութիւն է իշխ. Ի. Զ. Անդրօնիկով, վարչութիւնը վրացիներ և 1 ուսւ. իրաւասուները 47 հոգի, որոնք ըստ ազգութեան բաժնում են այսպէս՝ վրացիներ 20, ուսւներ 13, հայեր 8, յայներ 3, մահմեդականներ 2, եւրոպացի 1:

1912 թուականին Բաթումում ծնւել են 908 մարդ (438 տղ, 470 աղջ.) կատարուել է 219 ամուսնութիւն մեռել են 482 (360 արակ. և 182 իգ.) նշանակում է մի տարում է բնակչութիւնը աւելացել է 426-ով:

Հասարակական կուլտուրական հիմնարկութիւններ կան՝ թատրոն. (Երկաթէ) գրադարան-ընթերցարան, գրախանութ 6, տպարան 2:

Բաթումի գեղեցիկ դիրքից ու բնութիւնից ոչ պակաս, այլ աւելի սիրուն տեսարաններ է ներկայացնում նրա շրջագայքը: Պետերբուրգից, Մօսկվայից հարուստ մարդկակ ինչպէս Սեծովեան եղերքներից այլ տեղեր (Սօչի, Գագրի և այլն) այնպէս էլ Բաթումը ընտրել են իրենց ամարային հանգստութեան յարմարաւոր տեղը և նրա շրջաններում եղած գեղեցիկ վայրերում ինչպէս Մախանջառը, Յիսիս Զիրի, Ախալէն Կանաչ Հրուանդան (Зеленый мысъ) հողեր են գնել ու ապարանքներ կառուցել:



Թարամի տրականերից

Կանաչ Հրուանդան

Գործերս վերջացրել էլ Բաթումում և արդէն երեկոյ էր, դնացի իմ ծանօթ Ս-եանների մօտ. մի պատուական ընտանիք, որի հետ իմ վերջին երեկոն հաճոյքով պիտի անցկացնէի: Ընտանիքի հայրը մի պատկառելի ծերունի, զանազան երկիրներ մասն եկած մարդ էր, նրան մի քանի տեղեկութիւններ ունէի հարցնելու և Թիֆլիսի Ս-եաններից ողջոյններ հաղորդելու:


Երկու ժամի չափ այս յարգելի մարդկանց շրջանում հաճելի ժամանց ունենալուց յետոյ, ուշ երեկոյին չորսհակարութիւններ յայտնեցի ու զնացի

հիւրանոց, որտեղից՝ և նաւահանգիստ:

Հազիւ էի մտել շոգենաւ, երբ տեսայ այստեղ պ. Գ. Գրիգորեանին, որ պատիւ էր արել զալ ինձ բարիերթ մաղթերու, ասելով որ միւս ընկերները երկար սպասել են ինձ սրճարանում ու ցըռուել, կարծելով թէ «այսօր» չեմ գնում:

Ես խորին չորսհակարութիւն յայտնեցի թէ պարսին և թէ այն իմ ծանօթներին, որոնք այնքան մտերմացան երեք չորս օրուայ արդ կարճ ժամանակում և այնքան պարզ, ընկերական լաւ տպաւորութիւն թողին ինձ վրայ:

Ժամը զիշերուայ 12^{1/2} էր, երբ մեր շոգենաւը իւր բոլոր յարաբերութիւնները կարեց ցամաքի հետ ու մենք ճանապարհորդներս մեզ յանձնեցինք Պոնտոսական ալիքների քմահաճ բախտին:



„Цесаревичъ Георгій“ շոգենաւը


Բաթումից-Սուխում

(160 վերստ)

5 աճելի է ծովային ճանապարհորդութիւնը, հաճելի է երբ դադար է ծովը. բայց, ես շատ էլ չեմ ախորժում երբ բոլորին հանդարտ են լինում ջրերը. այլ լաւ է, երբ զգալի չափով ճօճում է սովային հիւրանդութիւն ասած բանի մասին հեռաչափով ճօճում է սաւը: Ծովային հիւրանդութիւն ասած բանի մասին հեռաչափով անգամ չունիմ. ուրիշ անգամներ Սկի թէ կասպիականի վրայ որ գաղափար անգամ չունիմ. ուրիշ անգամներ Սկի թէ կասպիականի վրայ մեծ փոթուրիների եմ հանդիպել, վախեցել եմ, բայց չեմ հիւրանդացել. վախենալուս համար ես ամաչում եմ, բայց որ չեմ հիւրանդացել, զրա համար էլ կարող եմ պարձենալ. դա մի կատարեալ երջանկութիւն է ճանապարհորդի համար:

Ծովը խաղաղ էր այդ օրը. մեր շոգենաւը „Цесаревичъ Георгій“-ն մեծ, վիթխարի շոգենաւերից չէր, բայց նոր կառուցուածք էր երկում և մասուր ու գեղեցիկ էր:

Կէս գիշերն անցել էր վաղուց. մենք մօտենում էինք Փոթիխն, բայց
ինչ հոգս, ես ինձ յանձնեցի Մորփեսի իշխանութեան:



Փորի

Մովի կողմից

Առաւտեան վաղ վերկացայ. թէ «բարի լոյսը» ծովի վրայ տեսնելու և
թէ թէյից չը դրկուելու. հաճելին և օդտակարը, հողեկանը և ֆիզիքականը
միասին. առանձին ոչ մէկով և ոչ միւսով կարող ենք ապրել. Շոգենաւի
մէջ մեծ, մորուքաւոր մարդիկ անզամ զիշերօթիկ աշակերտների ոլէս ստի-
պուած են յարմարուելու տեղական կանոններին. ժամանակից քիչ ուշացար,
կարող ես առանց թէյի կամ առանց նախաճաշի մնալ. չէ որ ծառայողներն
ել իրենց գործի և հանգստութեան ժամերն ունին. ամէն ինչ չափուած ու
ձևուած, ժամերով, բոպէներով:

Բարձրացայ տախտակամածը. արկը նոր նոր սկսում էր իւրքնաթաթով
երեսը լուանալ Պոնտոսի հեռաւոր ջրերում, սառը քամի էր. ճանապարհորդ-
ները տաք էին հագնուած: Նայում էին մօտիկ ջրերին. այստեղ ծովի այլ
կերպարանք ունէր և այլ տպաւորութիւն էր գործում քան երբ ես ցամա-
քիցն էի նայում ծովին: Այստեղ մարդն ազատ է, մասնակից չէ նրա կապ-
րիկներին ու խաղերին. այստեղ ինքն էլ լողում է նրա կոհակների հետ:
Բայց մարդը իւր թևերով չէ որ պատառում է ալիքները ու առաջ լողում.
Նրա ֆիզիքականը շատ է թոյլ այդ խիզախ ընթացքի համար. այստեղ նրա
միտքն է եկել օգնութեան, գերազանցօրէն աւելի դարձացել ու հնարել այս
շոգենաւը. Ու այդ գիտութեան անունով է որ այս ժամին մենք, ճանապար-
հորդներս մեզ հպարտ ենք զգում, մեզ բարձր ենք գտառմ մեր շուրջը
լողացող մեղուզաներից: Մտածում եմ. իսկ որ մարդը ընութեան թագաւորն
է, իսկ մեր գլխի վերե, և նաև շուրջը, տասնեակ վերստեր մեր հետքից
թռչելով զալիս էին եօթը ճայեր՝ (Կայք). ուղիղ եօթը հատ. ինչ խորհրդաւոր
թիւ: Սովորել են նաւերին. զալիս էին, զալիս մեր հետքից որ մի կտոր
բան կարողանային ձեռք բերել: Ճանապարհորդներից ոմանք օրիորդներ, պա-
տամ էին ծովը. ճայերը վրայ էին թափւում կացահարելու: Երանի ձեզ,
ընութեան անմեղ ու անարտ արարածներ, որ ձեր փոքրիկ փորը կշատ-

ԱՄԲՈԼՀ ԳՈՐԾԸ ԲԱՂԿԱՑԱՄ Է 5 ՀԱՏՈՒՅՑ

ԻԻՐԱՔԱՆՉԻԻՐ ՀԱՏՈՒՅՑ 400 ԵՐԵՍԻՑ, ՈՐ ԵՒ ԴՈՒՐՍ Է ԳԱԼՈՒ 10 ՊՐԱԿԻ
ՄԵՋ 40-ԱԿԱՆ ԵՐԵՍՆԵՐՈՎ,

ԷՆԴՈՒՆԻՈՒՄ Է Ա. ՀԱՏՈՒՅՑ ԲԵԺԵՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
4 ր ն ւ թ լ ի

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Վաճառւում է բոլոր հայ գլուխաճառանոցներում,

Պահապահը «ԳԵՂԱՐՈՒԻԵՍԻ» Խմբագրատանը, Թիֆլիս, Վանքի մեծ փողոց Հ 4.

Օտար տեղերից դիմել՝ Տիֆլիս, Ռեդակցիա „Գեհարվեստъ“
Լամ՝ Tiflis, (Caucase-Russie) Rédaction „Gegharvest“

2001-2

20 13

2094



